պարտ է նա ցուցանել թէ յումեքէ ստացաւ և որում պատճառի եմուտ 'ի ձեռն իւր։

ԳԼՈՒԽ ՄԿԲ.

Մէջ ամենայն քաղաքաց քանիս դրունս որ իցէ, և քանիս փողոցս որ իցէ բոլորն անուանեսցի յատուկ անուամբ, փողոցք և դրունք որ ոք մտանելոյ և որ ոք ելանելոյ, եթէ հեծեալ և եթէ հետևակ, որ միշտ ընթացք նոցայ գտցի մի 'ի յետուստ միուսի որ ոչ ոք հանդիման միմեանց, և 'ի դրունս քաղաքի յերեսս երկրի եթէ 'ի դաշտի և եթէ ուր և իցէ ամենայն երթ և գալացող թէ հեծեալ թէ հետևակ հանդիպելոյ միմեանց երկու կողմանց պարտ լիցի դառնալ առ աջ թև զի բացցի ձախ թև ճանապարհ անցանելոյ ընդ միմեանց, այլ զամենայն զոր ոք 'ի ընթացս իւր ընդ դէմ 'ի վեր ասացելոյս եթէ գտցի վնաս յումեքէ ծնեցեալ 'ի պատճառէ յանդգնութեան նա հատուցանել պարտ է վնասն վնասեալ առն։

ԳԼՈՒԽ ՄԿԳ.

Ոչ ոք կարէ բեկանել հատանել ճուղ, միրգ և թուփ մի ծառոյ այլոց, բայց Տեառն իւր։

ԳԼՈՒԽ ՄԿԴ.

Ոչ ոք կարէ քաղել փայտ 'ի անտառէ այլոց, բայց 'ի անտառէ իւրմէ գնեցեալ կամ 'ի